

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 1/15

ք.Երևան

12 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտի դեմ Ա/Ձ Սարգիս Գյուլբուդաղյանի (ՀՎՀՀ 25308253) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտով Ա/Ձ Սարգիս Գյուլբուդաղյանին ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջադրվել է տուգանք 150000 դրամի չափով:

Ա/Ձ Սարգիս Գյուլբուդաղյանի կողմից 24.12.2020թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտե դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում բողոքարկվում է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտը: Հարկ է նշել, որ բողոքարկվող ակտը կողմը ստացել է 02.09.2020թ.-ին, սակայն ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտի դեմ բողոքը բերվել է 24.12.2020թ.-ին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ: Հետևապես,

ղեկավարվելով վերը նշված իրավանորմերի դրույթներով դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 01.09.2020թ.-ի թիվ 4130166 ակտի դեմ Ա/2 Սարգիս Գյուլբուդաղյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ